ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Երևան 2003թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		էջ
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
2.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ	3
3.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	3
4.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	4
5.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ	5
6.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ	5
7.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ	6
8.	ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ	8
9.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ	9
10.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ	9
11.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼԸ ԵՎ ԼՐԱՑՆԵԼԸ	9
12.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ	10
13.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	10
14.	ՇԱՀԱԳՐԳՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՒՄ	10
15.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	11
16.	ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ	11
17.	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	12
18.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ	12
19.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ	12

1.Ընդհանուր դրույթներ

1.1 «ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ (այսուհետև՝ Հիմնադրամ), Քաղաքացու կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող , ոչ կառավարական կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, առողջապահական, մարզական, գիտական, և այլ հանրօգուտ նպատակներ:

1.2 Հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետև՝ Օրենսգիրք), «Հիմնադրամի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետև՝ Օրենք), այլ օրենքներով, իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Հիմնադրամի անվանումն է՝

հայերեն՝ «ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ռուսերեն՝ БЛАГОТВОРИТЕЛЬНЫЙ ФОНД “ГАГИК ЦАРУКЯН”

անգլերեն “GAGIK TSARUKYAN” CHARITY FOUNDATION

1.4. Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

1.5. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Թումանյան փողոց N 21:

2. Հիմնադրամի հիմնադիրը

2.1 Հիմնադրամի միակ հիմնադիրը նրա ստեղծման մասին որոշում կայացրած Հայաստանի Հանրապետության քաղաքացի Գագիկ Ծառուկյանն է (անձնագիր AE 0580303, տրված 22.09.2000թ. 019-ի կողմից, բնակության վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Առինջ):

2.2. Հիմնադրամի սկզբնական գույքի արժեքը կազմում է 10.000.000 (տասը միլիոն) դրամ, որը ներդրվել է հիմնադրի կողմից՝դրամական միջոցներով:

2.3. Հիմնադրամի հիմնադիրը՝

-որոշում է ընդունում Հիմնադրամի հիմնադրման մասին,

-հաստատում է Հիմնադրամի առաջին կանոնադրությունը,

-կազմակերպում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առաջին կազմը,

-նշանակում է Հիմնադրամի առաջին կառավարչին՝ գլխավոր տնօրենին,

-կարող է օգտվել միայն Հիմնադրամի կողմից մատուցվող ծառայություններից,
-իրականացնում է Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ:
2.4. Հիմնադրամի հիմնադրի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված իրավասությունները կատարելու անհնարինության դեպքում դրանք իրականացվում են սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

3. Հիմնադրամի նպատակները

3.1. Հիմնադրամի նպատակներն են՝

Հայաստանի Հանրապետության, առաջին հերթին՝ Կոտայքի տարածաշրջանի, սույն կանոնադրության 5.2 կետում նշված շահառուների խմբերին բազմակողմանի օգնություն և աջակցություն ցուցաբերելը, նրանց առջև ծառացած խնդիրները լուծելուն օժանդակելը, նրանց կողմից առաջարկված ծրագրերի իրականացմանը նպաստելը, սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, առողջապահական, մարզական, գիտական և այլ հանրօգուտ նախագծեր ու ծրագրեր նախաձեռնելը և իրականացնելը:

3.2 Հիմնադրամը, իր նպատակներին համապատասխան

ա/ նախաձեռնում և իրականացնում է ցանկացած ծրագիր կամ նախագիծ, որի հիմքում ընկած է սոցիալապես անապահով և կարիքավոր ընտանիքների, որբ և ծնողազուրկ երեխաների, ծերերի ու հաշմանդամների սոցիալական ու առողջական վիճակի բարելավումը

բ/ կազմակերպում և իրականացնում է Կոտայքի տարածաշրջանի համայնքներում բնակվող և Երևանի բուհերում ուսանողների անվճար փոխադրումը ավտոտրանսպորտով, ամբողջությամբ կամ մասնակիորեն վճարում նրանց ուսման վարձերը, բարձր առաջադիմությամբ ուսանողներին նշանակում և վճարում է անվանական կրթաթոշակներ

գ/ իրականացնում է ծրագրեր՝ կապված շնորհաշատ երեխաների ու երիտասարդների կրթության, զարգացման և ապագայի հետ, օգնում նրանց կայանալու և իրենց տեղը գտնելու կյանքում

դ/ նյութական և այլ օժանդակություն է ցուցաբերում ապագա ունեցող մարզիկներին ու մարզական ակումբներին, կազմակերպում և անցկացնում է մարզական միջոցառումներ, մրցույթներ, մրցանակաբաշխություններ, փառատոններ և այլն

ե/ հովանավորում է գիտության, մշակույթի, գրականության և արվեստի ասպարեզում լուրջ ավանդ ներդրած անձանց, աջակցում նրանց ստեղծած արժեքավոր գործերի հրապարակմանը, կազմակերպում հանդիպումներ, միջոցառումներ, ցուցահանդեսներ, շնորհանդեսներ և այլն

զ/ նպաստում է մատաղ սերնդի հայեցի, հոգևոր և ֆիզիկական դաստիարակությանը, այդ նպատակով կազմակերպում և իրականացնում է համապատասխան ծրագրեր ու միջոցառումներ՝ համագործակցելու իրավասու կազմակերպությունների պատկան մարմինների հետ

է/ նախաձեռնում, մշակում և իրականացնում է նախագծեր ու ծրագրեր նախադպրոցական, հանրակրթական և կրթական այլ հաստատությունների, ինչպես նաև առողջապահական հիմնարկների, նյութատեխնիկական բազայի ամրապնդման, դրանց շենքերի նորոգման, մանկավարժների ու բուժանձնակազմի սոցիալական խնդիրների լուծմանն օժանդակելու ուղղությամբ

ը/ աջակցում և նպաստում է արտադրության, ներառյալ գյուղատնտեսական արտադրության ոլորտներում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից լրացուցիչ աշխատատեղեր ստեղծելու վերաբերյալ ծրագրերի իրականացմանը:

3.3. Իր նպատակների իրականացման համար Հիմնադրամը կարող է համագործակցել ՀՀ օրենսդիր, գործադիր իշխանության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ և օտարերկրյա իրավաբանական անձանց ու քաղաքացիների, միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ, ինչպես նաև մասնակցել այլ կազմակերպությունների կողմից իրականացվող և Հիմնադրամի նպատակներին համահունչ ծրագրերի կատարմանը:

4. Հիմնադրամի իրավունակությունը

4.1 Հիմնադրամը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

4.2 Հիմնադրամն իրավաբանական անձ է և ունի հիմնադրի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է Հիմնադրամի ինքնուրույն հաշվեկշռում: Այն կարող է հաշվարկային և այլ

հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում ՀՀ դրամով և (արտարժույթով):

4.3. Հիմնադրամն ունի իր անվանմամբ կլոր կնիք: Վերջինս կարող է պարունակել նաև Հիմնադրամի անվանումն այլ լեզուներով:

4.4 Հիմնադրամը կարող է ունենալ խորհրդանիշ, որի նկարագրությունը պետք է ներառվի Հիմնադրամի կանոնադրության մեջ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն և/ կամ լրացում կատարելու միջոցով:

4.4 Հիմնադրամն ունի սեփական առանձնացված գույք, կարող է իր անունից մասնակցել գույքային շրջանառությունում, ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4.5 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

4.6 Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

4.7 Հիմնադրի՝ Հիմնադրամին հանձնած գույքը, ինչպես նաև Հիմնադրամի գործունեության արդյունքում ձեռք բերված գույքը և ստացված եկամուտը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն իրավունք ունի տիրապետել, օգտագործել և տնօրինել իրեն պատկանող գույքը սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

4.8 Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի, իսկ հիմնադիրը պատասխանատվություն չի կրում իր ստեղծած Հիմնադրամի պարտավորությունների համար:

4.9 Հիմնադրամը պարտավոր է յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին հաջորդող 6 ամսվա ընթացքում Օրենքի 39-րդ հոդվածում սահմանված կարգով հրապարակել

-հաշվետվություն իր գործունեության մասին,

-իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները,

-ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե Հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը կամ Օրենքով սահմանված չափը:

4.10 Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է, Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացմանը, որոնց համար Հիմնադրամը ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին: Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

4.11. *Հիմնադրամն իրավունք ունի անձամբ իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝*

-խառը գյուղատնտեսություն, շինարարություն, ավտոտրանսպորտային ծառայություններ, սննդամթերի արտադրություն, լայն սպառման ապրանքների արտադրություն:

4.12 Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադրի, Հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման ենթական ծախսերի:

4.13. Հիմնադրամն իրավունք ունի

-նյութապես աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց,

-անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին,

-ստեղծել ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ,

-ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքել պայմանագրեր,

-իրականացնել գիտական հետազոտություններ և ծրագրերի մշակումներ,

-աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից առաջարկված մշակութային,

-կրթական , գիտական բնույթի նախաձեռնությունների իրականացմանը,

-իրականացնել օրենքով չարգելված այլ

Հիմնադրամն ազատ է պայմանագրի հիման վրա սահմանելու իր իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

4.16. Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների պաշտպանության իրավունք:

5. Հիմնադրամի հնարավոր շահառուների խմբերը

5.1. Հիմնադրամի հնարավոր շահառուներն են համարվում ֆիզիկական և իրավաբանական այն անձինք, որոնց օգտին, սույն կանոնադրությանը համապատասխան կարող են կատարել որոշակի վճարումներ, մատուցվել ծառայություններ կամ նրանց փոխանցվել Հիմնադրամի գույքի որոշ մասը:

5.2. Հիմնադրամի հնարավոր շահառուների խմբերն են Հայաստանի Հանրապետության, հատկապես Կոտայքի տարածաշրջանում բնակվող (գտնվող)՝

-սոցիալապես անապահով և կարիքավոր ընտանիքները, դրանց անդամները,

-որբ և ծնողազուրկ երեխաները, մանկատները,

-ծերերն ու հաշմանդամները, ծերանոցները,

-շնորհաշատ ու խոստումնալի երեխաներն ու երիտասարդները,

-ուսանող երիտասարդությունը ,

-մարզիկները և մարզական ակումբները,

-գիտության, մշակույթի, գրականության, արվեստի բնագավառներում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձիք,

-նախադպրոցական, հանրակրթական և կրթական այլ հաստատությունները,

-առողջապահական հիմնարկները,

-արտադրության, ներառյալ գյուղատնտեսական արտադրության բնագավառում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձինք,

-հայ առաքելական եկեղեցին բոլոր թեմերով:

6. Հիմնադրամի գույքը

6.1. Հիմնադրամը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր համար պատասխանատու է այդ գույքով: Հիմնադրամի սեփականության իրավունքի օբյեկտներն են՝

ա/ գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները

բ/ աշխատանքները և ծառայությունները

գ/ տեղեկատվությունը

դ/ մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն)

ե/ ոչ նյութական բարիքները

զ/ գույքային իրավունքները՝ այդ թվում գրավի իրավունքը, գույքի օգտագործման իրավունքը՝ սերվիտուտները:

6.2. Հիմնադրամի սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք, բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց: Հիմնադրամի սեփականության ներքո գտնվող գույքի քանակն ու արժեքը չեն սահմանափակվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

6.3. Հիմնադրամի գույքի արժեքն արտացոլվում է Հիմնադրամի ինքնուրույն հաշվեկշռում:

6.4. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուրներն են՝

1. Հիմնադրամի հիմնադրի կանոնավոր և/կամ միանվագ գույքային վճարները
2. այլ անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները
3. արժեթղթերից, ինչպես նաև ավանդներից ստացված շահույթը (տոկոսները)
4. գործունեության արդյունքում ստացված եկամուտը
5. դրամաշնորհները
6. Հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
7. հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),
8. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցները:

6.5. Հիմնադրամն օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում՝ կարող է իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

6.6. *Հիմնադրամի ծախսերն են՝*

6.6.1. Կանոնադրական նպատակներին ուղղված ծախսերը

6.6.2. վարչակառավարական ծախսերը

6.7. Սույն կանոնադրության 6.6.1 կետով նախատեսված ծախսերը Հիմնադրամի բյուջեում պետք է արտահայտված լինի առանձին՝ ըստ նպատակների (ծրագրերի) և օգտագործման եղանակների և/կամ սուբյեկտների, որոնց միջև բաշխվելու են միջոցները: Այդ ծախսերում ներառվում են նաև Հիմնադրամի գույքի պահպանման, ավելացման և նորոգման, ինչպես նաև կապի, կոմունալ-կենցաղային, էլեկտրաէներգիայի, շինարարության ծախսերը:

6.8. Սույն կանոնադրության 6.6.2. կետով նախատեսված ծախսերը իրենց մեջ ներառում են Հիմնադրամի կառավարման, Հիմնադրամի աշխատողների աշխատավարձի , ինչպես նաև Հիմնադրամի մարմինների անդամների պարունակությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման ենթակա ծախսերը:

6.9. Սույն կանոնադրության 6.6.2 կետով նախատեսված ծախսերի գումարի չափը, որը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը, չպետք է գերազացի Հիմնադրամի տարեկան ընդհանուր ծախսերի 20 տոկոսը:

6.10. Հայաստանի Հանրապետության տարածքում Հիմնադրամի սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

6.11. Հիմնադրամի սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում:

7. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

7.1. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով: Հիմնադրամի մարմիններն են՝

1/ հոգաբարձուների խորհուրդը

2/ կառավարիչը (գլխավոր տնօրենը):

7.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է:

7.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն ունի 5 անդամ:

7.4. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առաջին կազմի անդամները նշանակվում են Հիմնադրամի հիմնադրի կողմից:

7.5. *Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը*՝

7.5.1. վերահսկողություն է իրականացվում Հիմնադրամի գույքի նպատակային օգտագործման, ինչպես նաև Հիմնադրամի կառավարիչի գործունեության նկատմամբ

7.5.2. կարող է ցանկացած տեղեկություն ու հաշվետվություն պահանջել Հիմնադրամի գլխավոր տնօրենից և այլ աշխատողներից

7.5.3. իրավունք ունի քննելու և լուծելու Հիմնադրամի գործունեությանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Հիմնադրամի հիմնադրի և գլխավոր տնօրենի իրավասությանը վերապահվածների:

7.6. Հիմնադրամը պարտավոր է ամեն տարի գումարել Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստ:

7.7. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի տարեկան նիստերը գումարվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից երկու ամիս անց՝ ոչ ուշ, քան 60 (վաթսուն) օրվա ընթացքում:

7.8. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հերթական և արտահերթ նիստերը հրավիրվում են խորհրդի նախագահի կողմից: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում հոգաբարձուների խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

7.9. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը ընտրվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների թվից Հիմնադրամի հիմնադրի աջակցությամբ: *Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը*՝

ա/ գումարում է խորհրդի նիստեր

բ/ նախագահում է խորհրդի նիստերին

գ/ կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները՝ համակարգելով խորհրդի անդամների և Հիմնադրամի գլխավոր տնօրենի գործունեությունը

դ/ կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը

ե/ իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ:

7.10. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերում յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

7.11. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

7.11.1. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելը

7.11.2. Հիմնադրամի ռազմավարական ծրագրերը, գույքի տնօրինման հիմնական ուղղությունները և կարգը հաստատելը

7.11.3. Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները հաստատելը

7.11.4. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշում ընդունելը

7.11.5. Տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումներ ընդունելը, դրանց աշխատանքի տարեկան արդյունքները հաստատելը

7.11.6 Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեությունը վերահսկելը

7.11.7. Հիմնադրամի ներկայացմամբ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի, անդամի, գլխավոր տնօրենի և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշումներ ընդունելը

7.11.8. Հիմնադրամի գլխավոր տնօրենի հաշվետվությունների լսումը տարեկան մեկ անգամ

7.11.9. Իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը

7.11.10. Հիմնադրի ներկայացմամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում հոգաբարձուների խորհրդի անդամ ընդունելը և հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշումներ ընդունելը

7.11.11. Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը

7.11.12. Օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի գլխավոր տնօրենին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

7.12. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

7.13. Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հոգաբարձուների խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

8. Հոգաբարձուների խորհրդի անդամները

8.1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը 2 տարի է:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ (գլխավոր տնօրեն):

8.2 Հոգաբարձուների խորհրդի անդամն իրավունք ունի՝

ա/ առաջարկություն ներկայացնելու Հիմնադրամի միջոցների օգտագործման վերաբերյալ

բ/ հետևելու Հիմնադրամի գույքի պահպանմանը, ինչպես նաև գործունեության իրականացմանը, ծանոթանալու հիմնադրամի փաստաթղթերին

գ/ Հիմնադրամի աշխատանքները բարելավելու նպատակով վերջինիս կառավարման մարմիններին ներկայացնելու աջակցություններ

դ/ ստանալ սպառիչ տեղեկատվություն Հիմնադրամի գործունեության մասին

ե/ դուրս գալ խորհրդի անդամությունից:

8.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամը պարտավոր է՝

ա/ ներկա գտնվել Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստին և մասնակցել քվերակությանը. նիստին մասնակցելու անհնարինության դեպքում նիստի գումարման օրվանից երկու օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնել խորհրդի նախագահին՝ ներկայացնելով իր դիրքորոշումը.

բ/ հոգալ Հիմնադրամի հեղինակության բարձրացման մասին

գ/ աջակցել հիմնադրամի գույքի համալրմանը

դ/ չխախտել սույն կանոնադրության պահանջները:

8.4. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

8.4.1 նրա գրավոր դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելու հաջորդ օրվանից

8.4.2 նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն երեք քառորդով

8.4.3 եթե հոգաբարձուների խորհրդի նիստերին նրա մասնակցելը դարձել է անհնարին կամ մահվան դեպքում

8.4.4 լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում հոգաբարձուների խորհրդի նոր կազմի ընտրության նիստին հաջորդ օրվանից:

8.5. Սույն կանոնադրության 8.4 կետով սահմանված դեպքում նոր անդամ(ներ)ի ընտրության համար թեկնածու(ներ) է առաջադրում Հիմնադիրը, իսկ եթե Հիմնադիրը գոյություն չունի կամ հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից 30 օրվա ընթացքում նա թեկնածու չի առաջադրում, ապա այսպիսի առաջարկություն կարող է անել Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներից յուրաքանչյուրը:

8.6 Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Հիմնադիրը պետք է պատշաճ ձևով տեղեկացված լինի:

8.7. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նոր անդամն ընտրվում է հոգաբարձուների խորհրդի կողմից նախկին անդամի լիազորությունների դադարման օրվանից ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում՝ հոգաբարձուների խորհրդի անդամների ձայների երկու երրորդով:

8.8. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների ընտրության՝ սույն կանոնադրությամբ չնախատեսված իրավահարաբերությունները կարգավորվում են Օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով:

8.9 Հոգաբարձուների խորհրդի անդամները խորհրդի աշխատանքներին մասնակցելու համար չեն վարձատրվում:

8.10. Հոգաբարձուների խորհրդի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահը, պատվավոր համանախագահները և պատվավոր անդամները: Հիմնադրամի գործունեությանը նշանակալի նպաստ բերած հեղինակավոր և անվանի անձանց հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահի, պատվավոր համանախագահի և պատվավոր անդամի կոչումներ շնորհում է հոգաբարձուների խորհուրդը՝ սույն կանոնադրության 7.13 կետով սահմանված կարգով:

9. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգը

9.1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգի վերաբերյալ ներկայացնել ցանկացած թվով առաջարկներ նիստի գումարումից առաջ՝30 (երեսուն) օրվա ընթացքում:

9.2 Օրակարգի վերաբերյալ առաջարկները ներկայացվում են գրավոր՝ նշելով անդամի անունը, ազգանունը և առաջարկի հիմնավորումը:

9.3 Հիմնադրամի գլխավոր տնօրենը կազմում և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամներին է տրամադրում տարեկան, ինչպես նաև արտահերթ նիստի օրակարգը և օրակարգին առնչվող փաստաթղթերը (դրանց պատճենները):

10. Հիմնադրամի կառավարիչը

10.1 Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է հիմնադրամի կառավարիչը (միանձնյա)՝ գլխավոր տնօրենը, որին, հիմնադրի ներկայացմամբ, ընտրում և պաշտոնից ազատում է հոգաբարձուների խորհուրդը (բացառությամբ սույն կանոնադրության 2.3 կետով սահմանված դեպքի):

Գլխավոր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են Օրենսգրքով, Օրենքով , սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է հոգաբարձուների խորհրդի նախագահը կամ հոգաբարձուների խորհրդի լիազորած այլ անձ:

10.2. Հիմնադրամի գլխավոր տնօրենը՝

10.2.1 առանց լիազորագրի հանդես է գալիս Հիմնադրամի անունից

10.2.2 տնօրինում է Հիմնադրամի գույքը՝ ներառյալ ֆինանսական միջոցներ

10.2.3. Հիմնադրամի անունից կնքում և կատարում է գործարքներ

10.2.4 տալիս է լիազորագրեր

10.2.5 իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը

10.2.6. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատակիցներին

10.2.7. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ

10.2.8. բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային (ներառյալ՝ արտարժութային) և այլ հաշիվներ

10.2.9. հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից միանձնյա հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպչական կառուցվածքը, հաստիքացուցակը

10.2.10. կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը

10.3. Հիմնադրամի աջակցությամբ և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ Հիմնադրամի գլխավոր տնօրենին կարող են վերապահվել նաև այլ իրավասություններ:

10.4. Հիմնադրամի գլխավոր տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ.

10.5. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել գլխավոր տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

10.6. Անձը, որն օրենքով, սույն կանոնադրության ուժով հանդես է գալիս Հիմնադրամի անունից, պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ հիմնադրամի: Նա պարտավոր է հատուցել իր կողմից Հիմնադրամի պատճառված վնասները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

11. Հիմնադրամի կանոնադրությունը փոփոխելը և լրացնելը

11.1. Հիմնադրամի կանոնադրությունում փոփոխությունները և լրացումները կատարվում են հիմնադրի աջակցությամբ, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ՀՀ օերնսդրությամբ սահմնված կարգով:

11.2. Եթե Հիմնադրամի կանոնադրությունն անփոփոխ պահելը հանգեցնում է այնպիսի հետևանքների, որոնք հնարավոր չէր կանխատեսել Հիմնադրամը ստեղծելիս, իսկ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը չի փոփոխում Հիմնադրամի կանոնադրությունը, ապա հիմնադրամի կանոնադրությունում փոփոխությունները կատարում է դատարանը Հիմնադրամի մարմինների դիմումի հիման վրա:

12. Հինադրամի մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները

12.1. Հիմնադրամն իրավունք ունի Օրենսգրքի, Օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջներին համապատասխան ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ:

12.2 Հիմնադրամի կողմից օտարերկրյա պետություններում ստեղծված մասնաճյուղերի ներկայացուցչությունների և հիմնարկների գտնվելու վայրի՝ երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

12.3. Ներկայացուցչությունը Հիմնադրամի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Հիմնադրամի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

12.4. Ներկայացուցչությունը Հիմնադրամի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթները:

12.5. Հիմնարկը կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Հիմնադրամի ստեղծած կազմակերպությունն է:

12.6. Ներկայացուցչությունները, մասնաճյուղերն ու հիմնարկները իրավաբանական անձինք չեն ու գործում են Հիմնադրամի հաստատած կանոնադրության հիման վրա:

12.7 Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի ու հիմնարկների գույքը տրամադրվում է Հիմնադրամի կողմից: Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի ու հիմնարկների գույքի արժեքն արտացոլվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Հիմնադրամի հաշվեկշռում և համարվում է Հիմնադրամի սեփականությունը:

12.8. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի ու հիմնարկների ղեկավարները նշանակվում են Հիմնադրամի գլխավոր տնօրենի կողմից ու գործում վերջինիս տված լիազորագրերի հիման վրա:

12.9. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի ու հիմնարկների գործունեության համար գույքային պատասխանատվություն է կրում Հիմնադրամը:

13. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրությունը

13.1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 5 (հինգ) օրվա ընթացքում առնվազն 2 օրինակով, որը ստորագրում են տվյալ նիստին մասնակցող բոլոր անդամները:

13.2. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի նախագահողը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

13.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրության մեջ նշվում են

1. նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը
2. նիստին մասնակցելու իրավունք ունեցող քանակը
3. նիստին մասնակցած անդամների քանակը
4. նիստին հրավիրվածների անունները
5. նիստի օրակարգը:

13.4. Արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները:

13.5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերը էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ անցկացնելու դեպքում հեռակա կարգով ընդունված որոշմանը կցվում են քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների դիրքորոշումը հավաստող գրավոր ապացույցներ, բացառությամբ հեռախոսակապի միջոցով ընդունված որոշումների:

14. Շահագրգռությունը հիմնադրամի գործարքներում

14.1. Հիմնադրամի՝ այլ կազմակերպությունների կամ քաղաքացիների հետ գործարքներ կնքելու և դրանք կատարելու մեջ շահագրգիռ անձ են համարվում Հիմնադրամի հոգաբարձունների խորհրդի անդամները, Հիմնադրամի գլխավոր տնօրենը (նրա տեղակալը), Հիմնադրամի այլ պաշտոնարար անձինք, եթե նշված անձինք՝

14.1.1. գործարքի կողմ կազմակերպությունների հետ գտնվում են աշխատանքային հարաբերությունների մեջ

14.1.2. հանդիսանում են այդ կազմակերպության մասնակից

14.1.3. այդ կազմակերպության պարտատերեր են

14.1.4. գործարքի կողմ քաղաքացիների հետ գտնվում են մերձավոր ազգակցական կապերի մեջ (փոխկապակցված անձինք), այսինքն՝ նրանց ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը

14.1.5. հանդիսանում են այդ քաղաքացիների պարտատերը:

14.2. Շահագրգիռ անձինք պարտավոր են պահպանել Հիմնադրամի շահերը և չօգտագործել կամ թույլ չտալ Հիմնադրամի հնարավորություններն օգտագործելու այլ նպատակների համար, բացի Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներից:

14.3. Այն դեպքում, երբ անձը շահագրգռություն ունի այն գործարքում, որում կողմ է կամ կողմ դառնալու մտադրություն ունի, ապա շահագրգիռ անձը պարտավոր է մինչև գործարքը կնքելու մասին որոշում ընդունելը Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին տեղյակ պահել իր շահագրգռության մասին:

Տվյալ գործարքին պարտադիր կերպով պետք է հավանություն տա Հիմադրամի հիմնադիրը կամ վերջինիս առաջարկով հոգաբարձուների խորհուրդը՝ խորհրդի բոլոր անդամների ձայների երկու երրորդով: Ընդ որում, գործարքում շահագրգռություն ունեցող խորհրդի անդամը քվեարկությանը չի մասնակցում:

14.4. Նշված պայմանների խախտումով կնքված գործարքը կարող է դատարանով անվավեր ճանաչվել շահագրգիռ անձանց (Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի մեկ կամ մի քանի անդամների) դիմումի համաձայն:

14.5. Շահագրգիռ անձը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի առջև Հիմնադրամին պատճառած վնասների չափով: Եթե վնասը պատճառվել է մի քանի անձանց կողմից, ապա Հիմնադրամի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

15. Հիմնադրամի գործունեության վերահսկողությունը

15.1. Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացնում է աուդիտն իրականացնող անձը (աուդիտորը), որն ընտրվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հիմնադրամի ներկայացմամբ:

15.2. Հիմնադրամի աուդիտն իրականացնող անձը (աուդիտորը) իրավունք ունի կատարել հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումներ և ծանոթանալ Հիմնադրամի գործունեության բոլոր փաստաթղթերին:

15.3. Հիմնադրամի աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) պահանջով Հիմնադրամի գլխավոր տնօրենը պարտավոր է տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, տալ պարզաբանումներ:

15.4. Հիմնադրամի աուդիտն իրականացնող անձը (աուդիտորը) ստուգում է Հիմնադրամի տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռը, դրանց վերաբերյալ տալիս է եզրակացություն:

15.5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը հաստատում է Հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռը՝ Հիմնադրամի աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացության առկայությամբ, եթե Հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը կամ Օրենքով սահմանված չափը:

15.6. Հիմնադրամի աուդիտն իրականացնող անձը (աուդիտորը) պարտավոր է առաջարկել գումարելու Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստ, եթե՝

15.6.1. վտանգ է սպառնում Հիմնադրամի շահերին

15.6.2. հայտնաբերվել են Հիմնադրամի պաշտոնարար անձանց կողմից կատարված չարաշահումներ:

15.7. Հիմնադրամի հիմնադրի պահանջով անհրաժեշտության դեպքում կարող է ներգրավվել անկախ աուդիտոր Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեությունը վերստուգելու նպատակով:

15.8. Հիմնադրամի աուդիտորի ծախսերի հատուցման կարգը, ինչպես նաև նրա վարձատրության չափը սահմանում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը:

15.9. Հիմնադրամի կողմից Օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը, համաձայն Օրենքի 38-րդ հոդվածի, իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասությունների և ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

16. Հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունը

16.1. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

16.2. Հիմնադրամի գլխավոր տնօրենը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվությունը,ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունները պետական մարմիններին

ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին ու այլ անձանց տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, իրավական այլ ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

16.3. Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերի հաշվառումը պետք է կատարվի Հիմնադրամի այլ ծախսերից առանձնացված կարգով:

17. Աշխատանքային հարաբերությունները

17.1. Հիմնադրամի աշխատակիցների և Հիմնադրամի միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային և քաղաքացիական օրենսդրության նորմերով և կարող են ձևակերպվել ինչպես աշխատանքային, այնպես էլ վճարովի ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի ձևով:

17.2. Հիմնադրամն իրավունք ունի աշխատողներ ներգրավել համատեղության կարգով:

17.3. Հիմնադրամի գլխավոր տնօրենը ինքն է որոշում աշխատողների՝ աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու կարգը, աշխատանքի վարձատրության ձևը և չափը, աշխատանքային օրվա ռեժիմը, հանգստյան օրեր և արձակուրդ տրամադրելու կարգը և համաձայնեցնում է հոգաբարձուների խորհրդի հետ:

17.4. Հիմնադրամի գլխավոր տնօրենը ապահովում է օրենքով երաշխավորված աշխատանքի վարձատրության նվազագույն չափը, աշխատանքային պայմանները և աշխատակիցների սոցիալական ապահովագրությունը:

18. Հիմնադրամի փաստաթղթերի պահպանումը

18.1. Հիմնադրամը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետների ընթացքում պահպանել՝

1. Հիմնադրամի պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը, կանոնադրության մեջ կատարված փոփոխություններն ու լրացումները, նոր խմբագրությամբ կանոնադրությունը, հիմնադրման մասին հիմնադրի որոշումը
2. Հիմնադրամի հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Հիմնադրամի գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերը
3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատած ներքին փաստաթղթերը

4. Հիմնադրամի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների կանոնադրությունները

5. Հիմնադրամի տարեկան հաշվետվությունները

6. Հիմնադրամի հաշվապահական հաշվառման փաստաթղթերը

7. Պետական մարմիններ ներկայացվող ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունները

8. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերի արձանագրությունները

9. Կնքած պայմանագրերը

10. Ֆինանսատնտեսական և այլ գործունեությանն առնչվող փաստաթղթերը

11. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

12. Վերը թվարկված բոլոր փաստաթղթերը պահպանվում են Հիմնադրամի գրասենյակում:

19. Հիմնադրամի վերակազմակերպումը և լուծարումը

19.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն Հիմնադրամի միացման և միաձուլման ձևով: Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի միաձայն որոշմամբ՝ Օրենսգրքով և Օրենքով սահմանված կարգով:

19.2. Հիմնադրամի լուծարմամբ նրա գոյությունը (գործունեությունը) դադարում է առանց դրա իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

19.3. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

19.4. Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝

1. հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ

2. Հիմնադրամի կողմից իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներից շեղվելու դեպքում

3. Հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների անհրաժեշտ փոփոխություններ

4. Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները

5. Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն

6. Հիմնադրամը ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ

7. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով:

19.5. Հիմնադրամի լուծարման հանձնաժողովը նշանակում է դատարանը:

19.6. Հիմնադրամի լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները, ներառյալ՝ լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը, ենթակա են գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա, օրենքով սահմանված կարգով:

19.7. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Հիմնադրամի կառավարման լիազորությունները:

Հիմնադրամի անունից դատարանում հանդես է գալիս լուծարային հանձնաժողովը:

19.8. Լուծարային հանձնաժողովը իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հայտարարություն է զետեղում Հիմնադրամի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի և ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է Հիմնադրամի լուծարման գործընթացի սկիզբ:

19.9. Լուծարման հանձնաժողովն իրականացնում է գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Հիմնադրամի լուծարման մասին:

19.10. Լուծարման ընթացքում հիմնադրամն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ՝ միայն իր պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

9.11. Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որում

տեղեկություններ են պարունակվում լուծարվող Հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ:

9.12. Դրամական միջոցների վճարումը պարտատերերին կատարվում է լուծարման հանձնաժողովի կողմից, Օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և լուծարման միջանկյալ հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից:

9.13. Պարտատերերի հետ հաշվարկները կատարելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում դատարանի հաստատմանը:

9.14. Պարտատերերի հետ հաշվարկները կատարելուց հետո Հիմնադրամի տրամադրության տակ մնացած գույքը լուծարման հանձնաժողովի կողմից ուղղվում է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

9.15. Հիմնադրամը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած պետական գրանցման պահից: